

491.99.5

12-88

Ришельевъ

Книги избраны  
для библиотеки  
имени генерала

Ришелье 1916г.



ՀԵՂԱՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵՐՆ

ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶԻՒ

Հ Յ Մ Ա Թ Օ Տ

# ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈվ եւ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԳԻՔՆԵՐՈվ

Ստորև եւ միջին դպրոցների համար

2-րդ սպազրութիւն

Թ Ի Ֆ Լ Ի Ո  
Էլեմ. ապահով Ա. Մ. Թ Ա Խ Ո Խ Մ Խ Ա Խ Վ Բ ա բ ա ն ս կ ա յ ա տ, № 2.  
1916

491.99-5  
P-88

3-589а

ՕՐԵՆԻԹԻՒՆ ԹՈՒՇՈՆԵԱՆ

Կ 91.99-5

թ-89

ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶԻՒ

Հ Ա Մ Ա Փ Օ Տ

# ՀԱՄԱՉԱՅՑՆՈՒԹԻՒՆ

ՔՈՐՉՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԵՒ ԳԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Սարին եւ միջին դպրոցների համար

2-րդ սպագուրիւն



12384

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Կիբեռ. ապարան Ա. Մ. Թ-Ա. Թ-Ա. Թ-Ա. Թ-Ա.

1916

19 APR 2013

4 MAY 2010

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Որովհետեւ այս դասագիրքը, ինչպէս և իմ «Ստուգաբանութիւնը», որոշւած է ստորին և միջին դպրոցների համար, այդ պատճառով էլ այստեղ զետեղւած են մեր աշխարհաբար լեզւի համաձայնութեան միմիայն ամենակարեսոր գիտելիքները: Դասընթացն աւելի գործնական դարձնելու համար՝ զետեղւած են զանազան ժարժութիւններ ու օրինակներ, որոնց չնորհիւ քերականութիւն սովորողը հիմնաւորապէս իւրացնում է այս կամ այն լեզւական կանոնը կամ առանձնայատկութիւնը: Սակայն անհրաժեշտ է, որ այդ տեսակ վարժութիւններ ու օրինակներ կազմեն ամեն անդամ աշակերտների ուսած յօդւածններից կամ ուսանաւորներից: Որովհետեւ դասագիրքս որոշւած է պետական և հայոց դպրոցների համար, որտեղ միաժամանակ անցնում են թէ հայերէն և թէ ուսուելին քերականութիւն, այդ պատճառով էլ, աւելի դիւրութիւն տալու համար՝ փակագծերի մէջ դրւած են քերականական այն աերմինների թարգմանութիւնները, որոնք չեն եղել իմ «Ստուգաբանութեան» մէջ:

Թիֆլիսի II իգական և IV արական գիմնազիաների դասատութիւնների մասնակիութեան մասին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ:



39920-67

## Բառերի կապակցութիւնը

ՆԱԽԱՏԱՍՏԻԹԵԱՆ Ա.ՆԴԱՄՆԵՐԻ Ա.ՐԾԱՅԱՅ-  
ՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԻ ՄԱՍԵՐՈՎ,

ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ. ԲԱԺԱՆՈՒՄԸ

§ 1. Քերականութեան այն մասը, որը ծանօթացնում է մեզ բառերի և նախադասութիւնների կապակցութեան կանոնների հետ, կոչում է համաձայնութիւն (Синтаксисъ):

Համաձայնութիւնը բաժանում է երկու մասի՝  
I. Բառերի կապակցութեան (Сочетаніе словъ) և  
II. Նախադասութիւնների կապակցութեան (Сочетаніе предложеиій):

Առաջին մասը ցոյց է տալիս՝ թէ ինչպէս ու երբ պէտք է փոխել փոփոխող բանի մասերի վերջաւորութիւնները և երբ ու ինչ նախդիր կամ յետադիր պէտք է գործ ածել այս կամ այն հոլովող բառի հետ:

Իսկ երկրորդ մասը ցոյց է տալիս՝ թէ երբ ու ինչ շաղկապներ կամ շաղկապների մտքով դրսող բառեր (գերանուններ, մակրայներ) պէտք է գործ ածել նախադասութիւնները իրար հետ կապելու ժամանակ:

§ 2. ԵՆԹԱԿԱՅԻ ԱՐՏԱՅԱՑՏՈՒԹԻՒՆԸ: ԵՆԹԱԿԱՆ գլխաւորապէս արտայայտում է գոյական անունով:—Աշակերտը գրում է:

Բացի զըանից, ենթական կարող է արտայայտել՝  
Դեռանունով:—Նա կարդում է:

Բայով (անորոշ եղան. յօդով):—Կարդալն օգտակար է:

Ածականով:—Կուտը քաղցածին մանր կը բըդի:  
Թւականով:—Կոյսերից նինգը յիմար էին:

§ 3. ՍՏՈՐՈԳԵԱԼԻ ԱՐՏԱՅԱՑՏՈՒԹԻՒՆԸ: Պարզ ստորոգեալն արտայայտում է բայով:—Կարդա, գրի՛ տարին բոլոր: Գիր կարդալով կը նանաչես շարն ու բարին, գու կ'իմանաս՝ ով է խնդում, ով է լալիս, ով է գրկում խեղճ թշւառին: Ալ. Պա.

Բարդ ստորոգեալը, որը միշտ էական բայի հետ միասին է լինում, արտայայտում է՝

Ածականով:—Երկինքը պար էր:  
Գոյականով:—Ռոկին մետադ է:

Դերանունով:—Աշխարհս նոյնն է, բայց մարդիկ են փոխւել:

Թւականով:—Մեր գրամատուրգների մէջ Գունդուկեանն առաջինն է: Ամենայն տեղ մահը մի է:

§ 4. ԼՐԱՅՈՒՅՉԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ: Լրացուցիչն էլ ենթակայի նման զլիսաւրապէս արտայայտում է գոյականով:—Հայրը սիրում է որդուն: Եղբայրը ստացաւ նամակ իր քոչից: Փայտը կտրում են կացնով:

Բացի զրանից, լրացուցիչն արտայայտում է՝

Դերանունով:—Արդեօք ի՞նչ էք դուք ինձ բերում, գարնան անձրկ՝, թէ կարկուտ: Ա. Ծա.

Ածականով:—Խելին խրատը, սեւին սապոնն ինչ անի:

Թւականով:—Կոյսերից հնգին ներս չը թողին:

Բայով, — ես ուզում եմ երգել: Զեր կարդալուն արդեօք երգս չի խանգարիլ:

§ 5. ՈՐՈՇԻՉ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ: Որոշիչը զլիսաւրապէս արտայայտում է ածականով ու դերայով:—Թութակը զերի էր նեղ (ածակ.) ու փակւած (զերը.) վանդակում: Բաֆթի:

Բացի զրանից, որոշիչն արտայայտում է՝

Դերանունով:—Մթջիւնը բերնով իր կերն է տանում:

Թւականով:—Ես ունիմ երկու գիրք:

Գոյականով:—Ծովի ջուրն աղի է: Թիմիս քաղաքը մեծ է:

§ 6. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ  
Պարագայական բառերը արտայայտում են՝

Մակրայով:—Այսօր կ'աշխատեմ, վաղը կը խաղամ: Սոխակը քաղցր (ածականից առաջ եկած մակրայ) է երգում:

Թւականով:—Աշակերտները նստած են երկուերկու:

Գոյականով:—Գիւղացին դաւսից վերադարձաւ տուն:

Բայով:—Զկնորսը գնաց ձուկ որսալու:

Վարժութիւն:—1. Վերուծեցէք հետեւեալ նախադասութիւնները և որոշեցէք՝ թէ ինչ բանի մասով են արտայայտուծ նրանց անդամները.

Տգեղի սիրտը դարձել էր ժէռ քար,  
Քրոջ խնդիրքը թողեց անկատար:

Զկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,  
Բռնեց մարմինը սիրուն աղջկան: Գմ. Քր.

Նօթից հանհնք երկու, կը մնայ հինգ:

Ես ինչ որ ուզում եմ կարդալ, դու էլ այն ես ուզում:

Նա լուռ էր, բայց այդ լուռթիւն խորին  
Նման էր անհուն ու անդորր ծովին: Գ. Ք.

ՍՏՈՐՈԴԵԱԼԻ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆԸ  
ԵՆԹԱԿԱՅՑԻ ՀԵՏ

§ 7. ՊԱՐԶ ՍՏՈՐՈԴԵԱԼԻ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Պարզ ստորոգեալը համաձայնւում է ենթակայի հետ թւով և դէմքով:—Ես կարդում եմ զիբք: Դու գրում ես դասդ: Աւակերտները զնացին տուն:

Ծախօթ:—Ժողովրդական լեզւի մէջ, երբ ենթական յոգնակի է լինում, բայ-ստորոգեալը յաճախ դրում է եղակի:—Սչիեւ յանկարծ մքնեց (փոխանակ մքնեցին): Ծնկներս քուլացաւ (փոխ.քուլացան):

2. Եթէ նախադասութեան մէջ կան երկու կամ աւելի եղակի կամ յոգնակի ենթականեր, բայ-ստորոգեալը դրում է յոգնակի:—

Տղայ, աղջիկ ուրախ, զըւարթ:

Փքքեցան, զերդ մայիսի վարդ: Դ. Ք.

Դարնանը բացւում են վարդ, մեխակ, շուշան և ուրիշ շատ ծաղիկներ:

3. Եթէ կան երկու կամ աւելի եղակի ենթականեր նոյնանման նշանակութեամբ, բայ-ստորոգեալը դրում է եղակի:—

Ամեն տեղ կարգ ու կանոն է պահանջւում: Ամեն բանում չափ ու սահման պիտի լինի:

4. Եթէ ենթակաները զանազան դէմքով են, բայ-ստորոգեալը դրում է յոգնակի, և այդ դէպքում

առաջին դէմքը գերազաւում է երկրորդից, երկրորդը՝ երրորդից:—

Դու, ես և նա կ'երգենք միասին: Նա և դու կը գնայ զրօննելու:

5. Իսկ եթէ այլադէմ ենթակաները կապւած են ոչ—ոչ, թէ—թէ, կամ—կամ և այլն շաղկապներով, բայ-ստորոգեալը համաձայնւում է մօտիկ ենթակայի հետ:—

Ոչ նրանք են ուզում գալ, ոչ էլ դու: Թէ դու կը գնաս զրօննելու, և թէ նրանք: Կամ մենք կը մնանք, կամ նա:

6. Եթէ եղակի ենթակայի հետ կայ թւական անուն, բայ-ստորոգեալը դրում է և եղակի, և յոգնակի:—

Առաջին զասարանից երեսունուվեց աշակերտ փոխադրւեցին (կամ փոխադրւեց), իսկ չորս հոգի մնաց (կամ մնացին):

7. Եթէ ենթական հաւաքական անուն է, բայ-ստորոգեալը սովորաբար դրում է եղակի:—

Եկեղեցում շատ ժողովուրդ կար:

8. Եթէ եղակի ենթակայի մօտ կայ սեռական հոլովով լրացուցիչ նետ յետադիրով, բայ-ստորոգեալը դրում է) ա) եղակի, երբ զործողութիւնը կենտրոնանում է ենթակայի մէջ, և բ) յոգնակի, երբ որոշակի յայտնւում է երկրորդական առարկայի մասնակցութիւնը:—

ա) Հայրը ուդու հետ զնաց պարտէզ:

բ) Հայրը ուդու հետ զնացին պարտէզ:

9. Անդէմ նախադասութեան մէջ բայ-ստորո-

գեալն արտայայտում է անդէմ բայով, որ սովորաբար գործ է ածւում Յ-ըդ դէմքով: —

Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին:

Անդէմ բայի մտքով են գործ ածւում երբեմն դիմաւոր բայի յովնակի Յ-ըդ և եղակի 2-ըդ դէմքերը, երբ զօրութեամբ իմացւում է ումանի, շատ մարդիկ, բոլոր մարդիկ կամ ամեն մարդ ենթական: —

Ասում են, որ ամենայն մարդ մի աստղ ունի երկնքում: Ինչ կը ցանես, այն կը հնձես:

Վարժութիւն: 1. Հետեւալ նախադասութիւնների մէջ համաձայնեցրէք պարզ ստորոգեալներն իրանց ենթականների հետ.

Արամն ու Լեռնը գնաց... զպրոց, իսկ Հայկը —մն... տանը: Հայկն ու ես կարգում...գիրք, Վաղը ես, եղբայրս և դու կը գն... թատրոն: Ոչ քոյրերս, ոչ էլ մայրս ուն... ժամանակ մեզ հետ գալու: Միւս անգամ թէ քոյրերս կը... թէ մայրս: Մեր տանը կա... ութը հոգի: Մեր անից հինգ հոգի սովորում... դպրոցում, իսկ մնացած երեքը դեռ չե... մտել դպրոց:

2. Կազմեցրէք պարզ ստորոգեալի և ենթակայի համայնութեան մի քանի օրինակներ:

#### § 8. ԲԱՐԴ ՍՏՈՐՈԴԵԱԼԻ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Բարդ ստորոգեալի մէջ ածականը, գոյականը, գերանունը և թւականը չեն փոխւում. փոխւում է միայն էական բայը, որը համաձայնուում է ենթակայի հետ դէմքով ու թւով: —

Դաւը կանաչ է: Դաւերը կանաչ են: Ես աշակերտ եմ: Դուք աշակերտ էք: Ես դարձեալ այն եմ, ինչ որ առաջ: Դուք դարձեալ այն էք, ինչ որ

առաջ: Մեր վիպասանների մէջ բաֆֆին առաջինն է: Մեր վիպասանների մէջ բաֆֆին ու Պոօշեանը առաջինն են:

2. Բայց շատ անգամ բարդ ստորոգեալի մէջ գոյականը համաձայնուում է ենթակայի հետ միայն թւով: —

Ասդերը երկնային մարմիններ են: Ասկին և արծարը ազնիւ մետաղներ են:

Կան դէպքեր, երբ գոյականը ենթակայի հետ թւով կարող է և համաձայնւել և շրհամաձայնւել:

Օրինակ, փոխանակ ասելու Դուք աշակերտ էք, կարելի է ասել՝ Դուք աշակերտներ էք:

3. Երբ նախադասութեան մէջ կան երկու կամ աւելի բարդ ստորոգեալներ, էական բայը միայն մի անգամ է յիշւում սկզբումը կամ վերջումը: —

Դարունը զով է, անուշ ու գեղեցիկ:

Դարունը զով, անուշ ու գեղեցիկ է:

4. Բարդ ստորոգեալի մէջ էական բայի պաշտօն են կատարում դառնալ, մնալ, լինել բայերը: —Ամբար, մառան զատարկ դառան: Ու գնաց որդին, եղաւ խորիմաստ, զիտուն ու հանճար: Նա հօր խօսքերից զարմացած մնաց:

Վարժութիւն: —Հետեւալ նախադասութիւնների մէջ համաձայնեցրէք բարդ ստորոգեալները իրանց ենթականների հետ:

Սոխակը երգիչ թռչուն է....: Սոխակն ու գեղձանիկը երգիչ թռչուն....: Սոխակն ու զեղձանիկը գանդակում պատուհանից կախւած....: Մարդարիտն ու Աղելայիզան աշակերտուհիների մէջ ամենահամեստն...: Մարդարիտը Աղելայիզայի բոյրն....: Այդ երկու աշակերտուհիները քոյր....: Հայկն ու Արամը դպրոցում առաջինն...:

2. Կազմեցրէք ձեզանից բարդ ստորոգեալի և ենթակայի համաձայնութեան մի քանի օրինակներ:

§ 9. ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՔ

1. Ներկայ ժամանակը գործ է ածւում այն ժամանակ, երբ խօսւում է կամ ներկայ, կամ թէ մնայուն ու անփոփոխ գործողութեան կամ դրութեան մասին:—

Աշակերտները սովորում են, ուսուցիչը սովորացնում է:

Մարտը տալիս է ձնծաղիկ,  
Ապրիլ՝ կապոյտ մանուշակ.  
Մայիսին բացում է վարդը.  
Սովորակ երգում անուշակ: Պ. Ա. Պ.

Մոռայլ, ահաւոր ձորի անդնդում  
Թարթարն անդադար գոշում է, թնդում: Յ. Թ.

2. Ներկայ ժամանակը, բացի իր սովորական գործածութիւնից, երբեմն գործ է ածւում անցեալ կատարեալի տեղ, երբ կամենում են անցեալ գործողութիւնը աւելի կենդանի պատկերացնել աշքի-առաջ:—

Խուռն կան Հայերն մի փոսի առաջ,  
Սրտից անդադար հանում են թառաշ.  
Դառն արտասոնքը նոցա աշքերին  
Հոսում են առատ ամայի գետնին: Գ. Գ.

Այստեղ հեղինակը նկարագրում է Վարդան Մամիկոնեանի թաղումը, որ կատարւել է 451 թւին. բայց կամենալով անցած դէպքը աւելի կենդանի

պատկերացնել մեր աշքի առաջ, բոլոր ստորոգեալ ները, փոխանակ անցեալ կատարեալի, ներկայ ժամանակով է գործ ածել:

3. Ներկան դրւում է ապառնու տեղ, երբ խօսւում է այնպիսի ապագայ գործողութեան կամ դըրութեան մասին, որ անպատճառ պիտի լինի:—

Եկող տարի գնում եմ Պետրոգրադ: Վաղը երեկոյեան հայոց ներկայացում կայ:

4. Անցեալ անկատարը գործ է ածւում, երբ խօսւում է շը վերջացած գործողութեան կամ դըրութեան մասին:—

Տրտմութեան մոռայլ ամպը ճակատին՝  
Նայում էր անթարթ Թամբազը գետնին,  
Նայում էր, տանջում դաժան մտքերից,  
Անհանգիս լինում ծանր հոգսերից: Յ. Թ.

5. Անց. անկատարը երբեմն գործ է ածւում կատարեալի տեղ, երբ խօսւում է մերձաւոր անցեալում կատարւած գործողութեան մասին:—

Երէկ ձիւն էր գալիս:

6. Անց. կատարեալը գործ է ածւում, երբ խօսւում է արդէն կատարւած կամ վերջացած գործողութեան մասին:—

Արդէն կատարւեց... Յափէսակեցին...

Զէնքը սրբազն արդէն խեցին.

Հայրական անզին աւանդըն անբիծ

Խլեց թշնամին ժառանգի ձեռքից...

Խւսուփի օրը սեւացաւ գլխին,

Խաւարեց աշխարհ, մռայլեց երկին: Յ. Թ.

7. Վաղակատարը գործ է ածւում, երբ խօս-

ւում է արդէն վազուց կատարւած գործողութեան  
մասին:—

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,

Սերտ բարեկամք անջատւած են ինձանից: Գ.Բ.

8. Գերակատարը գործ է ածւում, երբ խօսւում  
է հեռաւոր անցեալում կատարւած գործողութեան  
մասին:

Հեռացել էի իմ մայրենի աշխարհից:

Ինչպէս տեսնում ենք, վաղակատարը և գերա-  
կատարը տարբերւում են միմեանցից միայն օժան-  
դակ բայի ներկայ և անկատար ժամանակներով:

9. Պայմանական անցեալը յայտնումէ այնպի-  
սի գործողութիւն, որ կախում ունի մի որևիցէ  
պայմանից:

Իսկ ստորադասական անցեալը յայտնում է  
թէական գործողութիւն:—

Աշակերտը զասարանը կը փոխէր (պայմ.անց.),  
եթէ աշխատէր ամբողջ տարին:

Ինչպէս տեսնում ենք, պայմանական անցեալը  
կը մասնիկով է, իսկ ստորադասականը՝ եթէ-ով:

Սակայն յաճախ կը մասնիկի տեղ գործ է ած-  
ւում պիտի, իսկ եթէ-ի տեղ՝ եթէ որ, որ, թէ, թէ որ:—

Աշակերտը զասարանը պիտի փոխէր, եթէ որ  
աշխատէր ամբողջ տարին:

10. Պարզ ապառնին գործ է ածւում, երբ  
խօսւում է ապագայ գործողութեան մասին:—

Դպրոցում կ'առնելք ուսում, կըթութիւն,

Դպրոցը կը տայ ձեզ բարօրութիւն:

Երբ հարկ է յայտնել, թէ գործողութիւնը ան-

շուշտ կատարւելու է, կը մասնիկի տեղ գործ է ած-  
ւում պիտի կամ պէտի է:—

Վաղը պիտի զնամ բարեկամիս մօտ:

11. Ապառնին կը մասնիկով և առանց նրան՝  
երբեմն գործ է ածւում հրամայական եղանակի տեղ:—  
Կ'երթաս այս ձորով, կը մտնես անտառ,  
Այնտեղ կը գտնես բախտող անպատճառ... Յր.Թ.

Գնանք, փրկենք մեր հայրենիքը:

Վաղն անպատճառ գաս մեր տուն:

Դու չը հաւատաս, եթէ քեզ ասեն՝  
Հանգիստ զու նստիր և յուսով եղիր:

12. Ստորադասական ապառնին գործ է ած-  
ւում, երբ խօսւում է թէական ապագայ գործողու.  
թեան մասին, և սկսւում է եթէ, թէ, եթէ որ, որ  
բառերով կամ տռանց սրանց:—

Եթէ աշխատես, դասարանդ կը փոխես:

Աշխատես, դասարանդ կը փոխես:

Վարժովթիւն:—1. Հետեւեալ օրինակներից ջոկեցէք բա-  
յերը և բացարեցէք, թէ ո՞ր ժամանակով ևն նրանք գործ  
ածւած և ինչու.

Թամբազը չքեղ հանգէս էր սարքել—

Թուրք հարկահան էր նորա մօտ եկել...  
Սյաօր թամբազը շողբորթելով՝

Պարսից արքայի ծառայի գլխով

Թիթեռի նման՝ պողոյ է գալիս,

Մեծարում նորան ու պատիւ տալիս...

Եթէ կամենաս, կարող ես կանչել  
իւսուփին քեզ մօտ ու ձեռքից խլել:

Դամարն ասաց.

«Լաւ էր, որ եթէ բերէին ինձ մօտ  
Անզգայ, անշունչ քո դին արիւնոտ  
Ու ինձ ասէին՝ մեռաւ քո որդին,  
Հօր նըւիրական աւանդը ձեռքին.  
Գնա, հեռացիր, գարշելի էակ,  
Էլ այսուհետեւ ես չ'ունիմ զաւակ»: Յր. Թ.

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ բայերի  
գանձան ժամանակներով:

ՈՐՈՇԻՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵՍԼԻ ՀԵՏ

§ 10. ԱՇԱԿԱՆ ՈՐՈՇԻՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Ածական որոշիչը սովորաբար գրում է իր  
որոշեալից առաջ և մնում է անփոփոխ:

Կապոյս գլխով, կանաչ ոտով

և ծաղիկ եմ անուս հոտով:

Բայց բանաստեղծութիւնների մէջ որոշիչը  
կարող է զրւել իր որոշեալից և առաջ, և յետոյ:—  
Կարօտ ենք տեսքիդ, ահնման գարնւն,  
Շուտ արի մեզ մօտ, բեր ծաղիկ սիրուն:

2. Ածական որոշիչը, երբ արտայալուած է լի-  
նում կընատուած նախադասութեան ձեռվ, դրում  
է որոշեալից յետոյ:—

Մի մարդ տեսայ, չափազանց բարի (այսինքն,  
մի մարդ տեսայ, որ չափազանց բարի էր):

3. Տեսակ ցոյց տալու համար, ածականը եր-  
բեմն զրւում է գոյականից յետոյ. այդ գէպքում  
գոյականը սեռական որոշիչի ձևն է ստանում, իսկ  
ածականը այլ ևս որոշիչի զեր չի կատարում:—

Տանձի լաւը արջը կուտի (այսինքն, լաւ տան-  
ձը արջը կ'ուտի):

4. Սաստկութիւն ցոյց տալու համար՝ յոգնակի  
գոյականի մօտ յաճախ կըկնում է միննոյն ածա-  
կան որոշիչը:—



Խոր-խոր ձորեր: Սուր-սուր աշքեր: Մեծ-մեծ  
տներ:

5. Երբ զօյականը զօրութեամբ է իմացւում,  
ածականն ընդունում է նրա հոլովն ու թիւը:—

Աղքատներին պէտք է օգնել (այսինքն, աղքատ  
մարդկանց պէտք է օգնել):

§ 11. ԴերբնՅ, ԴերԱՆՈՒՆ ԵՒ ԹԻԱԿԱՆ ՈՐՈՇԻՉԻ  
ՀԱՄԱՉԱՅՑՆՈՒԹԻՒՆԸ

1. Դերայ որոշիչը, իբրև բայածական, հա-  
մաձայնուումէ իր որոշեալի հետ ածականների պէս:—

Յոզեած հոգիւը վազում էր, վազում,  
Փախչող այծերին հասնել չէր կարում: Յ. Թ.

2. Դերանուն որոշիչը ածականների նման,  
Աղբուում է որոշեալից առաջ և մնում է անփոփոխ:—  
Իմ տիկինը կերակրում է  
Ինձ նշերով, շաքարով,  
Իմ փանդակը գարդարում է  
Եր քնքուշիկ ձեռներով: Բաֆֆի:

3. Թւական որոշիչը նմանապէս գրւում է որո-  
շեալից առաջ և մնում է անփոփոխ:—

Առաջին դասարանն ունի չորս լուսամուտ և  
մեկ դուռը:

4. Եթէ նախադասութեան մէջ լինում են զա-  
նազան տեսակ որոշիչներ, առաջ դասւում են աւելի որոշները:—

Սյս բոլոր հայ աշակերտները գրւում են իրանց  
Տաճ դասը:

§ 12. ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇԻՉԻ ՀԱՄԱՉԱՅՑՆՈՒԹԻՒՆԸ

1. Գոյական որոշիչը սովորաբար իր որոշեալից  
նախադաս է վարւում և զրւում է սեռական հո-  
լովով:—

Աշնանը թափւում են ծառերի տերենները:

Թող չ'ասեն զբացիք՝ թէ ծոյլ են Հասօյի եղ-  
ները:

Սեռական որոշիչը ցոյց է տալիս՝ թէ մէկ ա-  
ռարկայ ումն է պատկանում կամ ինչին է վերա-  
բերում:

2. Սեռական որոշիչը ոտանաւորների մէջ եր-  
բեմն որոշեալից յետազաս է վարւում:—

Բարձր գմբէթը Հոռեկայ վանիի  
Ու կամարները վիճ ապարանի

Արեգի ջողքից ոսկեզօծւեցան: Յ. Թ.

3. Գոյական որոշիչը երբեմն ցոյց է տալիս ա-  
ռարկայի որպիսութիւնը:—

Լաւ ընդունակութեան տէր աշակերտը լաւ է  
սովորում:

4. Եթէ որոշեալը զօրութեամբ է իմացւում,  
սեռական որոշիչը ստանում է նրա յօդը և հոլովա-  
կան վերջաւորութիւնը:—

Գիւղի օղը աւելի մաքուր է, քան թէ բաղաժի-  
նը (այսինքն, քան թէ բաղաժի օղը).

Ինչպէս տեսնում ենք, այս դէպքում ը յօդից  
առաջ աւելանում է ն (քաղաքի+ն+ը):

5. Գոյական որոշիչը երբեմն զործ է ածւում  
ածականի տեղ:—

Արծաթ ջրեր: Մանուկ հասակ: Երազ օրեր:

6. Սաստկութիւն ցոյց տայու համար, յոդնակի գոյականի մօտ կրկնւում է գոյական որոշիչը:—

Գոյն-գոյն ծաղիկներ: Տեսակ-տեսակ մրգեր:

7. Գոյական որոշիչը թւականի հետ միասին ցոյց է տալիս քանակութիւն:—

Երեք արշին մահուդ: Հինգ փութ ալիւր:

Մի բաժակ ջուր, ով ուզի—տուր:

8. Գոյական որոշիչը, երբ արտայայտուած է կրծատուած նախադասութեան ձևով, կոչում է բացայայիչ (приложеніе): Սա զբում է իր բացայայտեալից և յետոյ, և առաջ:—

...Այսօր Թամրազը դաժան՝

Հայրենի հողի իշխանն անարժան,

Թուրքին ընդունել, սարքել է հանդէս:

Թիֆլիսը՝ Վրաստանի նին մայրաքաղաք, զըտնը է Կուրի ափին:

կամ՝

Վրաստանի նին մայրաքաղաք Թիֆլիսը զտնը է Կուր գետի ափին:

Բացայայտիչը կարող է արտայայտել նաև մէկ բառով. այդ գէպքում զըտնը է միշտ բացայայտեալից յետոյ:—

Արքար թագաւորը ընդունեց քրիստոնէութիւն: Մասիս սարը Հայաստանում ամենաբարձրն է:

Վարժութիւն:—1. Հետեւեալ օրինակներում իմացէք ուրոշիչների տեսակը և ցոյց տւէք իւրաքանչիւրի համաձայնութիւնը իր որոշեալի հետ.

Առաւտեան, երբ երկինքը յուզւած՝ իրեկ կարմիր ծով՝

Դալարազարդ սարի գլխին բուճնկւեցաւ ալ բոցով—

Մինարէթի գլխից հնչեց Մուհամէդի ազանը.

Յոգնած՝ չոքեց աղօթելու Նուշւայ բերդի գաղանը:

Մեծ խորհուրդ կայ այսօր բերդում: Աշտամուր թուրք խանը,

Ցենւած գափուկ, թաւշէ բարձին՝ ծխում էր իր զալեանը:

Խանի առաջ կանգնած էր մի հու, խոնարհ մանկաւիկ...

Ո՞վ է այն հէզ բանտարկեալը, այն թշւառը վիրաւոր,  
Որ դառնագին հառաջանքով թնդացնում է սար ու ձոր:

Պըլը-Պուղին՝ Շահնազարի խեղկատակը սիրելի՝

Կանգնած էր լուռ, իրեկ զազիր ու սկ գործի հայելի: Յթ. Թ. (Վահագան)

2. Կազմեցէք մի քանի օրինակներ, որոնց մէջ լինեն ածական, գերբայ, գերանուն, թւական և գոյական որոշիչներ:

տեսալ բայերից յետոյ՝ ասւել, նշանակւել, հաստատւել, օճել,  
լինել, գնալ, գալ, մնալ:

### § 14. ՍԵՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

#### ՀՈԼՈՎՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

##### § 13. ՈՒՂԴԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Ուղղական հոլովով դրւում է ենթական:—  
Մեզնից շատ առաջ կար մի բազաւոր:

2. Ուղղական հոլովով դրւում է բարդ ստորոգեալի այն մասը, որ գործ է ածւում էական բայի հետ:—

Սրամ աշակերտ է: Դազարոսն աղբատ էր:  
Մարդարիտն աշակերտուհիների մէջ առաջինն է:—  
3. Ուղղական հոլով են պահանջում կոչւել, ընսրւել, հաստատւել, օծւել, դառնալ, ընկնել և այլ կրառական ու չէզոք բայեր:—

Ուսաստանի մայրաքաղաքը կոչւում է (կրաւ.)  
Պետողադ:

Մատթէոս II ընտրեց (կրաւ.) և հաստատեց  
կարողիկոս 1909 թւին:

Դալի-Մահրասան դարձաւ (չէզոք) արեղայ,  
բայց մեռաւ (չէզոք) զինուոր:  
Փանահ-խանը զերի ընկառ (չէզոք) հայերի  
ձեռքը:

Վարժութիւն:—Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն սեռական հոլովով խնդիրներ հե-

1. Սեռական հոլովով գլխաւորապէս դրւում է  
այն գոյականը, որը միւս գոյականի համար ծառա-  
յում է, իբրև որոշիչ (§ 12, 1):—

Սարփ գլխին տիսուր ժպտաց  
Դարաբաղի արևել: Յր. Թ.

2. Սեռական հոլովով դրւում են նաև այն գո-  
յականները, որոնք ցոյց են տալիս աստիճան, ար-  
մէք, ժամանակ:—

Մարդս պիտի լինի վերին աստիճանի ազնիւ:  
Մեզ մօտ եկաւ մի բարձր դասակարգի մարդ: Ես  
խմեցի հինգ տարւայ զինի: Մեր զիւղից մինչև քա-  
ղաքը երկու օրւայ ճանապարհ է:

3. Սեռական հոլով են պահանջում մէջ, սակ (ին), յետեւ, առաջ, վրա, համար, հետ և ուրիշ յե-  
տաղիլներ:—

Դասարանի մէջ նստած են աշակերտները, Պա-  
տուհանիս սակ շինէք քո բունը: Ամպերի ետեւ թաք  
կացաւ լուսինը: Ուսուցչի առաջ կանգնած է աշ-  
կերտը: Սեղանի վրա դրւած է հայերէն զիրք:

Վարժութիւն:—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն սեռական հոլովով գոյական որոշիչներ:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն աստիճան, արժէք և ժամանակ ցոյց տւող սեռական հո-  
լովով գոյականներ:

3. Կազմեցէք մի քանի նախագասութիւններ, որոնց մէջ լինեն սեռական հոլովներ մէջ, վրա, տակ, առաջ, համար, հետադիրներով:

### § 15. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Տրական հոլովով դրւում է այն առարկան, որի օգտին կամ վնասին կատարւում է գործողութիւնը:—

Այս սկ ամպեր, վայ սկ ամպեր,  
Արդեօք ինչ էք արտիս բերում:

Ողջ արերին մոմ եմ վառել,  
Որ Աստած օք տայ իմ արտին: Ա. Ֆ.

Ողորմութիւն արէք, պարզն,  
Անտուն, անտէր աղբատին Մ. Ն.:

2. Տրական հոլով են պահանջում յաղթել, տիել, օգնել, ասել (անւանել), սպասել, գարկել, դիպչել և այլ բայեր:—

Արեն յաղթեց ամպերին: Խաւարը սիրեց աշխարհին: Օգնեցէ՛ք աղբատներին: Մասիսին ասում են Արարատ, Թշնառը սպասում է օգնուքեան: Զակեցէ՛ք, դարբիններ, կռանը սալին: Սարը սարին չի դիպչի, մարդը մարդուն կը դիպչի:

3. Տրական հոլով են պահանջում շարժում և ձգում ցոյց տւող բայերը, երբ նրանք յայտնում են գործողութեան նպատակը:

Աշակերտները դասերից յետոյ գնում են նաշի: Նախագահը հրաիրեց անդամներին խորեղի: Ազւէսի դունչը խաղողին չը նասաւ, ասաց՝ խակ է:

4. Տրականը, շատ անգամ ընդունելով յօդ՝ գործ է ածում վրա և մօս յետադիրներով սեռականի տեղ:—

Պայծառ արեր շողքը գցեց սարերին (փոխակ՝ սարերի վրա):

Ժամի դռան (փոխանակ՝ դռան մօս) դողդողալով կանգնած էր մի աղքատ կին:

5. Տրականը յօդով դրւում է նաև ներգոյականի տեղ, երբ նա յայտնում է գործողութեան ժամանակը:—

Դեկտեմբերին ձիւն է դալիս,

Յունիարին ծածկում սար ու ձոր:

Գարենանը ծածկում են ծառերը: Իրիկնապահին գիւղացիք դաշտից գնում են տուն: Վատ մարդը Զատկին էլ վատ կը լինի: Խ. Արովեանը ծնւել է 1804 թին:

6. Տրական հոլով են պահանջում արժանի, կարօս, ընդունակ, օգտակար, յարմար, սիրելի, ցանկալի և ուրիշ լի վերջացած որակական ածականներ:—

Մշակն արժանի է իր վարձին:

Կարօս ենք տեսիդ, անհնման գարուն:

Մարդս ընդունակ է սխալելու:

Լեզուներ իմանալն օգտակար է ամենին:

Հայրենիքը սիրելի է իւրաքանչիւր մարդուն:

7. Համար, պէս, հետ, մօս, առանց և փոխանակ յետադիրներն ու նախադիրները պահանջում են զերանուններ տրական հոլովով:—

Ինձ համար չէ գարնան գալը: Քեզ պէս լաւ ոչ ոք չի նկարում: Մեզ մօս հիւրեր եկան: Քոյրս ինձ

հետ մեաց տանը: Էն առանց քեզ էլ կարող եմ ստա-  
նալ:

Վարժութիւն:—1. Կազմեցէք մի բանի նախադասու-  
թիւններ, որոնց մէջ լինեն տրական հոլովով խնդիրներ հե-  
տևեալ բայերից յետոյ՝ անել (բարութիւն), մօտենալ, զարկել,  
ցոյց տալ, ձեռք տալ, գլուխ տալ:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ  
տրական հոլովը դրւած լինի ներդոյականի տեղ:

3. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ  
լինեն տրական հոլովով գերանուններ առանց նախութից յետոյ  
և հետ, մօտ, համար, պես յետադիրներից առաջ:

### § 16. ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

1. Հայցական հոլովով դրւում է այն առարկան,  
որի վրա անցնում է ենթակայի գործողութիւնը. այս  
պատճառով բոլոր ներգործական բայերը պահան-  
ջում են հայցական հոլով:—

Կայէն սպանեց Ա. Բէլին: Աշակերտը դրում է  
դասը:

2. Երկու հայցական հոլով են պահանջում ան-  
տանել, կոչել, ընտել, նշանակել, հաստատել, օծել,  
կարգել և ուրիշ սրանց նման բայեր:—

Մատրիու Բ. Ին (հայց. հ.) 1894 թւին ընտրե-  
ցին պատրիարք (հայց. հ.), իսկ 1909 թւին հաստա-  
տեցին կաթուղիկոս (հայց. հ.): Մեզ (հայց. հ.) Հայ-  
կի անունով կոչւում են հայ (հայց. հ.): Անտառի  
կենդանիներն իրանց քագաւոր (հայց. հ.) ընտրեցին  
փիդը (հայց. հ.):

3. Հայցական հոլով են պահանջում շարժում  
ցոյց տւող բայերը, պատասխանելով ո՞ւր հարցին:—

Աշակերտներն առաւտեան գալիս են դպրոց,  
իսկ դասերից յետոյ գնում են տուն:

4. Հայցական հոլովը երբեմն դրւում է ներ-  
գոյականի տեղ: Միայն այս զէպքում, եթէ հասարակ  
անուն է, ընդունում է յօդ. իսկ եթէ յատուկ ա-  
նուն է, գործ է ածւում առանց յօդի:—

Հիւսիսային կողմերը (փոխանակ՝ կողմերում)  
սաստիկ ցըտեր են լինում: Նիրւանզագէն ծնւել է  
Շամախի (փոխանակ՝ Շամախում):

5. Հայցական հոլով են պահանջում այն բառե-  
րը, որոնք ցոյց են տալիս ժամանակ:—

Մարդիկ ցերեկն աշխատում են, գիշերը հանգըս-  
տանում, Պետրոս Մեծը թագաւորեց քառասուն և  
երեք տարի:

6. Հայցական հոլով են պահանջում բաղդատա-  
կան ածականները քան թէ կամ քան բառերից յե-  
տոյ:—

Մասիսն աւելի բարձր է, քան թէ Արագածը:  
Պետրոգրադն աւելի մեծ է, քան Թիֆլիզը:

7. Դէպի, մինչեւ նախութիրները պահանջում են  
հայցական հոլով:—

Դէն, սիրուն ծիծեռնակ,

Հեռացիր, թոփը աբագ

Դէպի հայոց երկիրը,

Ծնւած տեղս—Աշտարակ: Գոդիս.

Առաքելում մինչեւ այդ  
Զրիս միջին էր լողում: Գ. Գ.

Վարժութիւն:—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն հայցական հոլովով խնդիրներ ներգործական բայերից յետոյ:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ մինեն խնդիրներ երկու հայցական հոլովով օծել, կարգել, նշանակել, ընտրել և այլ սրանց նման բայերից յետոյ:

3. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ մինեն հայցական հոլով շարժում ցոյց տւող բայերից, ժամանակ ցոյց տւող բառերից, բաղդատական ածականներից և դեպի ու մինչեւ նախդիրներից յետոյ:

### § 17. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

1. Բացառական հոլով են պահանջում շատ կրաքարական բայեր:—

Բէլ սպանւեց Հայկից: Մարդս ճանաշւում է իր գործերից:

2. Բացառական հոլով են պահանջում գործողութեան ուղղութիւնը ցոյց տւող բայերը, պատախանելով ումնից, ինչից, ո՞րտեղից հարցերին:—

Քոյրն եղբօրից ստացաւ նամակ:

Ինչու արցունք ցայտում են

Քո սէգ, հպարտ աշերից,

Ինչու արագ փախչում ես

Այդ հարազատ ափերից: Գ. Գ.

3. Բացառական հոլով են պահանջում օփնել, կազմել, կառուցանել և ուրիշ բայեր, որոնք ցոյց են տալիս՝ թէ ինչ նիւթից է շինուում առարկան:—

Սեղանը շինուում են փայտից: Պալատները կառուցանուում են կոփածոյ քարից:

4. Բացառական հոլով են պահանջում հարցական, յարաբերական, անորոշ ու որոշեալ դերանունները և թւական անունները:—

Կովը, ձին ու շունը վիճում էին՝ թէ նրանցից որին աւելի է սիրում տէրը: Կենդանիներից իւրաքանչիւրն ունի իր տեղը և սիրելի է իր տիրոջ: Կոյսերից հինգը յիմար էին, հինգը՝ իմաստուն:

5. Բացառական հոլով են պահանջում բաղդատական և գերազրական աստիճանի ածականները:—

Արամն աւելի խելօք է Հայկից: Առիւծը կենդանիներից ամենազօրեղն է:

6. Բացառական հոլով են պահանջում մի քանի չէզոք և ներգործական բայեր, երբ հարկաւոր է յայտնել գործողութեան կամ դրութեան պատճառը:—

Չմեռը ջուրը սառչում է ցրտից: Նա բարկութիւնից պատառուեց շորերը,

7. Բացառական հոլով են պահանջում վախենալ, դադարել, ձանձրանալ և այլ բայեր:—

Վախեցիր կանգնած ջրից:

8. Բացի նախդիրը և մակրայներից առնւած յետոյ, առաջ յետագիրները պահանջում են բացառական հոլով:—

Մեր պարտիզում բացի վարդից կան և ուրիշ հոտաւէտ ծաղիկներ: Դարունից յետոյ գալիս է ամառը: Խուելուց առաջ պէտք է մտածել:

Վարժութիւն:—1. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինի բացառական հոլով կը աւորական բայերից յետոյ:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն բացառական հոլովով խնդիրներ գործողութեան ուղղութիւնը ցոյց տւող բայերից (ո՞ւմնից, ո՞ւշեղից), անորոշ ու որոշեալ գերանուններից և թւական անուններից առաջ:

3. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ լինեն բացառական հոլովով խնդիրներ բաղդատական ու գերադասական աստիճանի ածականներից, դադարել ու ձանձրանալ բայերից, բացի նախդիրից յետոյ և առաջ, յետոյ յետագիրներից առաջ:

### § 18. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀԱՌՈՎ.

1. Գործիական հոլովով գրւում են այն անունները, որոնք ցոյց են տալիս գործիք կամ միջոց, պատասխանելով ո՞ւմնով, ինչո՞վ հարցերին:—

Գրատախտակի փրա գրում են կարիքով: Խոտը հնձում են մանգաղով: Ծնողները մխիթարյում են իրանց զաւակներով:

2. Գործիական հոլով են պահանջում այն անունները, որոնք ցոյց են տալիս առարկանների և նրանց գործողութեան որպիսութիւնը:—

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,  
Հոգով գեռ արի, զիսով ալեոր: Գ. Փ.

Գարուն է եկել նախշուն թեւերով,  
Նախշուն թեւերով, պէս-պէս ձեւերով:

Կէս գիշերին գեղ լուսինը  
Ամպերի մէջ լողալով,

Հանդարտ ու վեհ ընթանում էր:

Արծաթի պէս ըոդալով: Յր.Թ.

3. Գործիական հոլովով գրւում են այն անունները, որոնք ցոյց են տալիս ազգ, ցեղ, ծագում և կոչում:—

Հայր Ներնդ Ալիշանը ազգով հայ էր, կրօնով՝ կաթոլիկ: Կալի-Մահրասան կոչումով հոգևորական էր:

4. Գործիական հոլովով են գրւում այն անունները, որոնք ցոյց են տալիս գործողութեան ժամանակը:—

Ժամանակով կատուն ճռն էր,  
Շունն էլ գլխին գտակ չունէր: Յով. Թ.

Արիշները մեծանում էին տարով, բայց Սասունցի Կալիթը մեծանում էր օրով ու ժամով:

Ծանօթ — կան ժամանակ ցոյց տւող անունները, որոնք անխտիր պահանջում են և գործիական, և հայցական:—

Մարդիկ ցերեկով աշխատում են, զիւերով հանգստանում:

Ըստ օրինակը կարելի է փոխել այսպէս:—  
Մարդիկ ցերեկն աշխատում են, զիւերը հանգստանում (§ 16, 5):

Գործիական հոլովով են գրւում այն անունները, որոնք ցոյց են տալիս առարկայի շարժողութեան նախապարհը կամ տեղի տարածութիւնը:—

Մարդիկ ճանապարհորդում են ծովով ու ջամանով: Մայր Սբաքսի ափերով քայլամոլոր զնում եմ: Գատարանի երկարութեամբ զրւած են նստարանները: Փողոցի լայնութեամբ ջուր էր հոսում:

6. Կործիական հոլովով են դրւում երբեմն նաև  
մէջր տակ, վրա և մի քանի ուրիշ գոյականից և  
մակրայից առնւած յետազիրներ, եթր նըանք ցոյց  
են տալիս առարկայի շարժողութեան ճանապարհը:—

Առուն հոսում էր անտառի միջով,  
կանաչ թփերի, ծառերի տակով:

Ամպերի միջին տխուր ժպտալով՝  
Լողում էր լուսին երկնի վրայով:

Վարժութիւն:—1. Կազմեցէք մի քանի նախադասու-  
թիւններ, որոնց մէջ լինեն գործիական հոլովով անուններ,  
ա) գործիք կամ միջոց ցոյց տւող, բ) որպիսութիւն, ազգ,  
շեղ, ծագում ու կոչում ցոյց տւող և դ) ժամանակ, չարժո-  
ղութեան ճանապարհ կամ տեղի տարածութիւն ցոյց տւող:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ  
լինեն գործիական հոլովով գոյականից ու մակրայից առնւած  
յետազիրներ՝ մէջ, տակ, երեխ, վերեւ և այլն:

### § 19. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

1. Ներգոյական հոլովով դրւում են այն անուն-  
ները, որոնք ցոյց են տալիս գործողութեան կամ  
զրութեան տեղը:—

Թառամում եմ ես այս օտար երկրումը,  
Մենակ բըսած ծաղկի նման դաշտումը:

2. Ներգոյական հոլովով են դրւում այն անուն-  
ները, որոնք ցոյց են տալիս գործողութեան ժա-  
մանակամիջոցը:—

Աստած ստեղծեց աշխարհը վեց օրում:

Իր կեանքումը նա չը գիտէր՝  
Թէ ինչ բան է կարիքը:

### § 20. ԿՈԶԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

Կոչական հոլովով դրւում է այն առարկան, ո-  
րին դիմում է խօսողը:—

Գնա, որդեա՞կ, աշխարհս անցիր,  
Պանծալի անուն մեծի դու ստացիր: Գ. Ք.

Վարժութիւն:—1. Կազմեցէք մի քանի նախադասու-  
թիւններ, որոնց մէջ լինեն ներգոյական հոլովով տեղ և ժա-  
մանակամիջոց ցոյց տւող անուններ:

2. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ  
լինեն կոչական հոլովով անուններ:

3. Հետեւեալ օրինակների մէջ որոշեցէք, թէ ինչ բառ  
ինչ հոլովով է գործ ածւած ու թէ ինչու.

Ո՞վ լուսին, լուսին, էլ քանի էղպէս  
Դալկացած, տժգոյն, ախուր երկես.  
Այդ թիսպոտ ամպերն քեզ զարհուրեցրին,

Բոցոտ կայծակներն քեզ այլայեցին.  
Երկնից կամարի գեղը գու ես լոկ,  
Աստեղց մէջ չը կայ քեզ նման ոչ ոք,  
Մբթէ նախանձից թափել ես գոյնըդ.  
Զէ, ուրիշ գաղտնիք ունիս սրտումը: Գ. Ք.

Հերիքնազ երկար իր խօսքով անզօր  
Յուսահատ հարսին կարդում էր յորդոր,  
Արցունքն աչքին աղերսում նորան  
Զը թողնել տունը, խընայել մանկան: Յր. Թ.



## II

## Նախադասութիւնների կապակցութիւնը

§ 21. Նախադասութիւնները կապակցւում են միմեանց հետ երկու եղանակով՝ 1. ստորադրական (способъ подчиненія) և 2. շարադրական (способъ сочиненія).

### ՍՏՈՐԱԴՐԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 22. Ստորադրական եղանակով կապակցւում են միմեանց հետ գլխաւոր (главное) և երկրուգական (придаточное) նախադասութիւնները:

Գլխաւոր կոչւում է այն նախադասութիւնը, որից կախում ունի ուրիշ նախադասութիւն:

Երկրուգական կոչւում է այն նախադասութիւնը, որ կախում ունի գլխաւորից և կազմում է նրա համար գլխաւորապէս կամ որոշիչ, կամ լրացուցիչ, կամ թէ պարագայական բառ: —

Մանիք թելեր հաստ ու բարակ,

Որ ես հոգամ իմ ցաւեր: Դ. Ա.

Այս օրինակում Մանիք թելեր հաստ ու բարակ գլխաւոր նախադասութիւն է: Որ ես հոգամ իմ ցաւեր՝

— երկրորդական, որովհետեւ վերջինս կախում ունի առաջինից և ծառայում է նրա համար, որպէս նպատակ ցոյց տւող պարագայական բառ, պատասխանելով ինչո՞ւ հարցին:

Երկրորդական նախադասութիւնները լինում են՝ որոշիչ, լրացուցիչ և պարագայական: —

Այն գետը, որ անցնում է Թիֆլիսի միջով, կոչում է Կուր:

Որդին լսում է, ինչ որ ասում են ծնողներ:

Ուսեղ կայ սէր, այնտեղ կայ միաբանութիւն:

Այս օրինակներում որ անցնում է Թիֆլիսի միջով — երկրորդական որոշիչ նախադասութիւն է, որովհետեւ գլխաւոր նախադասութեան համար ծառայում է, որպէս որոշիչ. ո՞ր գետն է կոչւում Կուր — որ անցնում է Թիֆլիսի միջով: Ինչ որ ասում են ծնողները — երկրորդական լրացուցիչ նախադասութիւն է, որովհետեւ լրացնում է գլխաւոր նախադասութեան ստորոգեալի միտքը. ի՞նչ է լսում որդին — ինչ որ ասում են ծնողները: Իսկ ուսեղ կայ սէր — երկրորդական պարագայական նախադասութիւն է, որովհետեւ գլխաւոր նախադասութեան համար ծառայում է, որպէս տեղ ցոյց տւող պարագայ. ո՞ւսեղ կայ միաբանութիւն — ուսեղ կայ սէր:

§ 23. Կան նաև երկրորդական ենթակայ և առողջեալ նախադասութիւններ: —

Ով որ փանայ, շուտով չքանայ:

Յալսնի է, որ երկիրս կլոր է:

Այս տունն այնպէս է, որ շուտով պիտի հանդիի:

Այս օրինակների մէջ՝ Ով որ փանայ, որ եր-

կիրս կլոր է—երկրորդական ենթակայ նախաղասութիւնների են, որովհետև գլխաւոր նախաղասութիւնների համար ծառայում են, որպէս ենթակայ, և պատասխանում են ո՞վ և ի՞նչ հարցերին. ո՞վ շուտով շքանայ—ով որ փեանայ. ի՞նչն է յայտնի—որ երկիրս կլոր է: Իսկ որ շուտով պիտի ժանդիւի—երկրորդական ստորոգեալ նախաղասութիւնն է, որովհետև գլխաւոր նախաղասութեան համար ծառայում է, որպէս ստորոգեալ և պատասխանում է ի՞նչպէս է հարցին. այս տունն ի՞նչպէս է—որ շուտով պիտի ժանդիւ:

**Վարժութիւն:**—1. Հետևեալ օրինակների մէջ որոշեցէք երկրորդական նախաղասութիւնները ու նրանց տեսակը.

Հէնց Ամբրանի անունը լսեց, հովիտն իսկոյն երկիւղից ցնցւեց: Տեսներով նորա դառը տանջանքը, հովիւը յայտնեց համակրանքը:

Սագիկ-մագիկ, ես քեզ կը տամ քաղցր կուտիկ, որ դու ուտես: Ես կը խնդրեմ իմ մայրիկին, որ նա ժողով քո փետուրներ: Այս տունը, որ երեսում է հեռուում, մերն է: Աքլուրը մի օր կտուրը բարձրացնաւ, որ աշխարհը տեսնի: Մառան յայտնեց, որ եկել են հիւրերը: Խնդրեմ ասացէք, որ ժամն էր Մինչև Շուշանը զարդարւի, ժամը գուըս կը գայ: Աշակերտները մանում են դպրոց, որպէս զի ուսում առնեն: Կան մարդիկ, որոնք չեն հասկանում ուսման նշանակութիւնը:

2. Կազմեցէք իւրաքանչիւր տեսակից մի քանի երկրորդական նախաղասութիւններ:

### § 24. ՈՐՈՇԻՉ ՆԱԽԱՂԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Որոշիչ նախաղասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ որ, ով, ով որ գերանուններով, որոնց գլխաւոր նախաղասութեան մէջ պատասխանում են ակնյայտնի կամ գօրութեամբ իմացւող այն, այնպիսի, նա դերանունները:—

Այն գետը, որ անցնում է Թիֆլիսի միջով, կոչւում է Կուր: Ազնւութիւնը մի (այնպիսի) արժանիք է, որ չ'ունեն շատերը: Ես նա եմ, որին ամբողջ Վրաստան վազուց յիշում է, կոչում Ամիրան: Ես նա եմ, ով որ ճեղքեց ամպերը, սլացաւ վերև, դէպի աստղերը:

Ինչպէս տեսնում ենք, որ, ով որ գերանունները գրւում են այն հոլովով ու թւով, ինչ որ պահանջում է երկրորդական նախաղասութեան բայրը:

Որ գերանունը որոշիչ նախաղասութեան մէջ երբեմն փոխարինուում է ուր և երբ մակրայներով, երբ հարկ է ցոյց տալ տեղ կամ ժամանակ:—

Այն երկիրը, ուր մենք ապրում ենք, կոչւում է Կովկաս: Կաը ժամանակ, երբ Անին չէն ու հարուստ քաղաք էր:

**Վարժութիւն:**—Կազմեցէք մի քանի երկրորդական որոշիչ նախաղասութիւններ:

§ 25. ՈՐՈՇԻՉ ՆԱԽԱՂԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԿՐՃԱՏՈՒՄԸ

Որոշիչ նախաղասութիւնները կրճատում են՝  
ա) Գոյական անունի օգնութեամբ, երբ նրանց  
ստորոգեալն արտայայտած է գոյական անունով ու  
օժանդակ բայով:—

Պետրոս Մեծը, որը Ռուսաստանի քաջաւորն էր,  
յաղթեց Շեղացիներին:

Այստեղ որը Ռուսաստանի քաջաւորն էր որոշիչ նախաղասութիւնը կրճատելով՝ կորցնում է իր նախաղասութեան ձևը և դառնում է քացայայտիչ:—

Պետրոս Մեծը՝ Ռուսաստանի քաջաւորը՝ յաղթեց Շեղացիներին:

բ) Ածական անունի օգնութեամբ, երբ ստորոգեալն արտայայտած է ածական անունով ու օժանդակ բայով:—

Այն մարդը, որ բարի է, սիրելի է ամենքին:  
Որբարի է որոշիչ նախաղասութիւնը կրճատելով՝  
կորցնում է իր նախաղասութեան ձևը և դառնում է  
ածական որոշիչ բառ:—

Բարի մարդը սիրելի է ամենքին:

գ) Դերբայի օգնութեամբ, երբ ստորոգեալն  
արտայայտած է սահմանական եղ. բայով:—

Այն աշակերտը, որ աշխատում է, միշտ առաջ  
է գնում:

Այստեղ որ աշխատում է որոշիչ նախաղասութիւնը  
կրճատելով՝ դառնում է ներկայ դերբայով որոշիչ  
բառ:—

Աշխատող աշակերտը միշտ առաջ է գնում:  
Երբ կրճատելուց յետոյ, որոշիչ նախաղասութեան տեղ ստացւում է անցեալ կամ ապառնի դերբայ, նրա ենթական, եթէ գոյական է, դառնում է սեռական որոշիչ, իսկ եթէ դերանուն է՝ ստացական որոշիչ:—

Այն գառը, որ պահել է Աստιած, գայլը չի տանիլ:  
Այն գիրքը, որ դու պիտի տաս ինձ, արդէն կարդացել եմ:

Որ պահել է Աստιած, որ դու պիտի տաս ինձ  
նախաղասութիւնները կրճատելուց յետոյ՝ նրանց  
տեղ ստացւում են անցեալ և ապառնի դերբայներ:—

Աստուծոյ պահած գառը գայլը չի տանիլ:

Քո ինձ տալու գիրքն արդէն կարդացել եմ:

Ինչպէս տեսնում ենք, առաջին նախաղասութեան ենթական (Աստιած) լինելով գոյական, դառնում է սեռական որոշիչ (Աստուծոյ). իսկ երկրորդ նախաղասութեան ենթական (դու)՝ լինելով դերանուն, դառնում է ստացական որոշիչ (դու):

§ 26. ՈՐՈՇԻՉ ՆԱԽԱՂԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՆ ԿՐԻԱՏՈՒՄ

1) Երբ յարաբերական դերանունը դրւած է ոչ  
ուղղական, ոչ էլ հայցական, այլ ուրիշ հոլովով:—

Այն գիրքը, որից արտագրում եմ դասս, հայերէն է: Այն աշակերտը, որին մօտենում եմ, իմ ընկերն է:

Այս օրինակներում որոշիչ նախաղասութիւնները չի կարելի կրճատել, որովհետեւ յարաբերական

դերանունը մէկի մէջ դրւած է բացառական, իսկ  
միւսի մէջ տրական հոլովով:

2) Երբ ստորոգեալ բայը դրւած է ստորադա-  
սական եղանակով: —

Գազանները որոնում են այնպիսի տեղեր, որ  
կարողանան ապահով ապրել:

Վարժութիւն: —Կրճատեցէք հետեւալ երկրորդական ո-  
րոշիչ նախադասութիւնները.

Սրեամանուկը, որն արդէն տասնուհինգ տարեկան էր  
դարձել, չէր ազատւել իր ծնողների հսկողութիւնից: Բայց ին-  
չու լացեց այդ արի մարդը, որին անծանօթ էր ահն ու դար-  
դը: Գուցէ թէ յիշեց նա այդ բոսէին տանն անպաշտպան  
թողած ընտանին, որ չուտով կ'ընկնի ձեռքը թշնամուն: Ես նա  
եմ, որից զրկւած է շատ մարդ: Ես նա եմ, որ միշտ այս բո-  
լոր բարիք պահում է, խնամում: Մենք անցանք մարգագետ-  
նով, որ ծածկւած էր բարձր խոտով: Յովհաննէսը, որն իմ ա-  
մենամօտ ընկերն է, երէկ եկու մեզ մօտ: Աբգարը, որ հայոց  
թագաւոր էր, ընդունեց քրիստոնէութիւնը:

## § 27. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Լրացուցիչ նախադասութիւնները կապակցւում  
են գլխաւորի հետ ինչ, ինչ որ, որ գերանուններով և  
թէ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասու-  
թեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատաս-  
խանում են այն, նա ցուցական գերանունները: —

Ինչ կը ցանես, այն կը հնձես:

Բաւականացիր նրանով, ինչ որ ունես:

Դու պատմէ՞ թէ ինչպէս

Աստ անտէր ու խեղճ եմ ես:

Օտարի խօսքերը, որոնք ունեն լրացուցիչ նա-  
խադասութեան միտք, ոչ մի բառով չեն կապւում  
գլխաւոր նախադասութեան հետ, այլ բաժանում են  
նրանից միջակէտով և չակերտներով: —

Կոյը ծնւած մի մարդ հարցրեց մէկին. «Ի՞նչ  
գոյն ունի կաթը»:

Բայց երբ խօսողի սեպհական բառերի տեղ՝ մէջ  
է բերւում միայն նրանց բովանդակութիւնը, միջա-  
կէտի և չակերտների փոխարէն դրւում է թէ կամ որ  
շաղկապը: —

Կոյր ծնւած մի մարդ հարցըց մէկին՝ թէ ի՞նչ  
գոյն ունի կաժը:

Վարժութիւն:—Կազմեցէք մի քանի երկրորդական լրա-  
ցուցիչ նախադասութիւններ:

§ 28. ԼՐԱՅՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԿՐՁԱՏՈՒՄԸ

Լրացուցիչ նախադասութիւնները կրճատում են՝  
ա) Գոյական անունի օգնութեամբ:—

Ինձ յայտնեցին, թէ եղբայրս գալիս է:

Այստեղ թէ եղբայրս գալիս է լրացուցիչ նա-  
խադասութիւնը կրճատւելով՝ կորցնումէ իր նախա-  
դասութեան ձեզ և դառնում է գոյական անուն:—

Ինձ յայտնեցին եղբօրս գալուստը:

Ինչպէս տեսնում ենք, այս դէպքում երկրորդա-  
կան նախադասութեան շաղկապը (թէ) կորչում է,  
իսկ ենթական (եղբայրս) դառնում է որոշիչ  
(եղբօրս):

բ) Անորոշ և անցեսլ դերբայների օգնութեամբ:—

Լաւ մարդն ուզում է, որ ամենքին լաւութիւն  
անի: Ինչ կը ցանես, այն կը հնձես:

Այս երկրորդական լրացուցիչ նախադասութիւն-  
ները կրճատւելով՝ դառնում են զերբայներ:—

Լաւ մարդն ուզում է ամենքին լաւութիւն անել:  
Ցանածդ կը հնձես:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ էլ երկրորդա-  
կան նախադասութիւնների շաղկապները (որ, ինչ)

կորչում են: Իսկ երկրորդ օրինակի մէջ, բացի երկ-  
րորդական նախադասութեան շաղկապից, կորչում  
է նաև գլխաւոր նախադասութեան այն բառը:

Վարժութիւն:—Կրճատեցէք հետեւեալ երկրորդական լրա-  
ցուցիչ նախադասութիւնները.

Երեխան տեսնում էր, որ հայրը կարդալիս ակնոց էր  
գնում աշքերին: Երեխան խնդրեց հօրը, որ իր համար էլ ակ-  
նոց առնի: Հայրը հասկացաւ՝ թէ ի՞նչ է որդու միաքը: Նա  
վճռեց, որ առնի որդու համար այբբենարան: Ինչ որ ասաց  
հայրը, որդին կատարեց: Որդին պատմեց հօրը այն ամենը,  
ինչ որ կարդաց գրքում:

Գարունը գալիս է թէ չէ, (իսկոյն) գիւղացիք  
սկսում են իրանց աշխատանքները:

Քանի որ իմ զաւակունք  
Այսպէս կը մնան պանդուխտ,  
Ինձ միւս սպառը կը տեսնէք: Գ.Գ.

Նախ քան կը խօսես, մի լաւ մտածիր:

գ) Որակական նախադասութիւնները կապակցում են զլխաւորի հետ ուր (որ) կամ որտեղ, որտեղից և այլն մակրայներով, որոնց զլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում է այնպէս մակրայը:—

Դրէ այնպէս, ինչպէս խօսում են: Սիրիք քո հայրենիքը, ինչպէս քո նախնիքներն են սիրել:

դ) Քանակական նախադասութիւնները կապակցում են զլխաւորի հետ որքան կամ ինչքան, որչափ մակրայներով, որոնց զլխաւոր նախադասութան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այնքան, այնչափ մակրայները:—

Մարդ, որքան կարող է, (այնքան) պիտի օգնի ուրիշներին:

ե) Պատճառ և նպատակ ցոյց տւող նախադասութիւնները կապակցում են զլխաւորի հետ որովհետեւ, որպէս զի, որ շաղկապներով, որոնց զլխաւոր նախադասութեան մէջ. ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են՝ նրա համար, այն պատճառվ, այն նպատակով բառերը:—

Զմեռը սառշում է ջուրը, որովհետեւ ցուրք է լինում: Աշակերտները մտնում են դպրոց, որպէս զի

## § 29 ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ա) Տեղական պարագայական նախադասութիւնները կապակցում են զլխաւորի հետ ուր (որ) կամ որտեղ, որտեղից և այլն մակրայներով, որոնց զլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այնտեղ, այնտեղից և այլն մակրայները:—

Որտեղ կայ սէր, այնտեղ կայ միութիւն:

Որտեղ՝ հաց, այնտեղ կաց:

Գնա (այնտեղ), ուր որ կամենաս:

բ) Ժամանակական նախադասութիւնները կապակցում են զլխաւորի հետ երբ(որ), նէնց(որ), թէ չէ, նազիւ թէ, քանի որ, նախ քան բառերով, որոնց զլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այն ժամանակ, իսկոյն, միւս և այլն:—

Երբ լուսանում է, (այն ժամանակ) մարդիկ դարթնում են:

Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,  
(Այն ժամանակ) Գնաց արքունիք տափղը  
Ճեռքին: Գ. Գ.

ուսում առնեն: Մարդիկ ապրում են, որ օգնեն իրար: Վարժութիւն: — Կազմոցէք մի քանի երկորդական պարագայական նախադասութիւններ:

### § 30. ՊԱՐԴԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Պարագայական նախադասութիւնները կրճատ-  
ւելով՝ կորցնում են իրանց շաղկապները և դառնում  
հասարակ պարագայական բառեր:

ա) Տեղական նախադասութիւնները կրճատում  
են դերբայի և տեղ գոյականի օգնութեամբ: —

Գնա, ուր որ կամենաս:

Ուտեղ հաց՝ այնտեղ կաց:

Այս նախադասութիւնները կրճատւելով՝ դառ-  
նում են: —

Գնա կամեցած տեղի:

Կաց հաց եղած տեղում:

բ) Ժամանակական նախադասութիւնները կրճ-  
ատում են՝

1. Դերբայի և պէս բառի օգնութեամբ: —

Երբ լուսանում է, մարդիկ զարթնում են:

Այս նախադասութիւնը կրճատւելով՝ դառնումէ: —

Լուսանալուն պէս մարդիկ զարթնում են:

2. Անորոշ դերբայի բացառ. հոլովի և յետոյ  
բառի օգնութեամբ: —

Երբոր ամեն բան պատրաստեց կարգին,

Գնաց արքունիք տաւիղը ձեռքին:

Այս նախադասութիւնը կրճատւելով՝ դառնումէ: —

Ամեն բան կարգին պատրաստելուց յետոյ գնաց  
արքունիք տաւիղը ձեռքին:

3. Անորոշ դերբայի սեռ. հոլովի և ժամանակ  
բառի օգնութեամբ: —

Երբ անձեւ է կարկարում, հովիւն անուշ քնի  
մէջ քաղցը երազ է տեսնում:

Այս նախադասութիւնը կրճատւելով՝ դառնումէ: —

Անձրւ կարկարելու ժամանակ հովիւն անուշ  
քնի մէջ քաղցը երազ է տեսնում:

Անձեւ կարկարելու ժամանակ ձեւ կարելի է  
փոխարինել՝ անձեւ կարկարելու միջոցին կամ  
անձեւ կարկարելիս:

գ) Ուակական նախադասութիւնները կրճատ-  
ում են սեռական հոլովի և պէս կամ նման բառի  
օգնութեամբ: —

Դրէ այնպէս, ինչպէս խօսում են:

Սիրիք հայրենիքդ, ինչպէս քո նախնիքներն են  
սիրել:

Այս նախադասութիւնները կրճատւելով՝ դառնում  
են: —

Դրէ խօսելու պէս:

Սիրիք հայրենիքդ քո նախնիքների նման:

դ) Քանակական նախադասութիւնները կրճատ-  
ում են սեռական հոլովի և չափ բառի օգնու-  
թեամբ: —

Մարդ, որքան կարող է, պիտի օգնի ուրիշներին:

Այս նախադասութիւնը կրճատւելով՝ դառնումէ: —

Մարդ իր կարողացածի չափ (կամ կարողու-  
թեան չափ) պիտի օգնի ուրիշներին:

Ստացական իր գերանունը այստեղ կարելի է  
փոխարինել և (ը) յօդով: —

Մարդ կարողացածին չափ պիտի օգնի ուրիշներին:

ե) Պատճառ ցոյց տւող նախադասութիւնները կրծատում են բացառական հոլովի օգնութեամբ:— Զմեռը սառչում է ջուրը, որովհեեւ ցուրտ է լինում:

Այս նախադասութիւնը կրծատւելով՝ դառնումէ—  
Զմեռը սառչում է ջուրը ցրտից:  
Այս ձեւը կարելի է փոխարինել—  
Զմեռը սառչում է ջուրը ցրտի պատճառով:  
զ) Նպատակ ցոյց տւող նախադասութիւնները կրծատում են դերբայի օգնութեամբ:—

Աշակերտները մտնում են դպրոց, որպէս զի ուսում առնեն:

Այս նախադասութիւնը կրծատւելով՝ դառնումէ—  
Աշակերտները մտնում են դպրոց ուսումառնելու: Առնելու դերբային կարելի է աւելացնել համար յետադիրը:—

Աշակերտները մտնում են դպրոց ուսում առնելու համար:

Վարժութիւն: — Կրծատեցէք հետեւել երկրորդական պարագայական նախադասութիւնները.

Հազիւ թէ ծովի ափին էր հասած, իր սիրուն քրոջ գլուց նա ցած: Հէնց Ամիրանի անունը լսեց, հովիւն իսկոյն ընց նա ցած: Եկան Ամիրանի անունը լսեց, հովիւն իսկոյն երկիւղից ցնցւեց: Եկել եմ այստեղից, որտեղից որ եկել են մերոնք: Արդէն զօրացած էր Արեամանուկը, երբ սկսեց տամբունք: Երբ գորտը սեսաւ եղան, նախանձեց նրա խոշուար դնալ: Երբ գորտը սեսաւ եղան, նախանձեց նրա խոշուար թիւնքն: Գորտն սկսեց գքւել, որպէս զի հաւասարւի եղան: Մինչև հասուը կը բարակի, բարակի հոգին գուրս կը գայ: Մինչ որ լուսանում է, զարթնում է աշխարհ: Արկը մայր էր Հէնց որ լուսանում է,

մանում, երբ մենք հասանք գիւղը: Մեր կառապանն անդադար մտրակում էր ձիաներին, որովհետեւ ուզում էր մեզ շուտ տեղ հասցնել: Երբ անցանք գետը, հեռւից երևաց գիւղը:

§ 31. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸԸ

ա) Երկրորդական ենթակայ նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ ով կամ ով որ դերանունով և որ կամ թէ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են նա, այն ցուցական դերանունները:—

Ով աշխատում է, նա բարիք է վայելում:

Յայտնի է, որ երկիրս կլոր է:

բ) Երկրորդական ստորոգեալ նախադասութիւնները կապակցւում են գլխաւորի հետ որ, ինչ որ, ինչպէս բառերով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ակնյայտնի կամ զօրութեամբ պատասխանում են այն, նոյն, այնպէս բառերը:—

Այս տունն այնպէս է, որ շուտով պիտի քանդի:

Այս այն է, ինչ որ ինձ տեել ես.

Վարժութիւն: — Կազմեցէք մի քանի երկրորդական ենթակայ ու ստորոգեալ նախադասութիւններ:

§ 32. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Ենթակայ և ստորոգեալ նախադասութիւնները, միւս երկրորդական նախադասութիւնների նման՝

կրճատւելիս կորցնում են իրանց շաղկապները:  
ա) Ենթակայ նախաղասութիւնները կրճատւում  
են դերբայի, գոյականի կամ այլ բառի օգնու-  
թեամբ:—

Ով աչխատում է, նա բարիք է վայելում:

Յայտնի է, որ երկիրս կլոր է:

Այս նախաղասութիւնները կրճատւելով՝ դառ-  
նում են—

Աչխատողը բարիք է վայելում:

Յայտնի է երկրիս կլորութիւնը:

Ինչպէս տեսնում ենք երկրորդ օրինակից, գո-  
յականի օգնութեամբ կրճատւելիս՝ երկրորդական  
նախաղասութեան ենթական (երկիրս) դառնում է  
սեռական յատկացուցիչ (երկրիս):

բ) Ստորոգեալ նախաղասութիւնները կրճատ-  
ւում են դերբայի օգնութեամբ:—

Այս տունն այնպէս է, որ շուտով պիտի ժանդիի:

Այս այն է, ինչ որ ինձ տել ես:

Այս նախաղասութիւնները կրճատւելով՝ դառ-  
նում են—

Այս տունը շուտ ժանդիելու է:

Այս է ինձ տածդի:

Վարդութիւն:—1. Կրճատեցէք հետեւալ երկրորդական  
ենթակայ և ստորոգեալ նախաղասութիւնները.

Միշտ քաղցր է այն, ինչոր անցել է: Հզօրի առաջ միշտ  
մեղաւոր է նա, ով որ անզօր է: Զուր չի առւում, թէ մի  
ձեռքը ծափ չի տալ: Մինչև առաւօտ լսելի էր, թէ ինչպէս  
էր գոռում փոթորիկը, Խնձոր չէ այն ամենը, ինչ որ կլոր է:  
Քո տեսածն այն չէ, ինչ որ ես եմ տեսել: Մարդս ոչ այլ ինչ

է, եթէ ոչ մահկանացու: Աշխատասիրութեան կողմից Արամը  
նոյնն է, ինչ՝ Լեոնը:

2. Հետեւալ կրճատւած նախաղասութիւնները դար-  
ձրէք լիակատար.

Պատմէց շատերուն Վարդանի մահը: Քեզ ուժ կը տան  
Մասիսի քաջը քաջ Վարդան լինելու: Մէջքիդ կը կապեմ իմ  
ձեռքով սրած թուր: Մեր բակումը քեզ անհամբեր սպասող  
ձի է կանգնած: Տւէք բեհեղեայ մեզ ձեր շապիկը փաթաթե-  
չու մեր մարմնի վերը: Խնդալու ժամանակը բարեկամ, երգէ  
երգ դու ցնծութեան:

(соединительное), 2. ներհակական (противительное),  
3. տրիմական (разделяющее) և 4. պատճառական  
(винословное):

### ՇՈՐՍ.ԴՐԱԿԱՆ ԿԾ.ՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 33. Նարազրական եղանակով կապակցւում  
են միմեանց հետ ինքնուրոյն նախադասութիւնները,  
որոնք քերականօրէն իրարից կախում չ'ունեն և ո-  
րոնցից իւրաքանչիւրը մի առանձին միտք է պա-  
րունակում իր մէջ։ Այդ անկախ նախադասութիւն-  
ներն ունեն միայն ներքին տրամաբանական կապ։—

Աշունը եկաւ, թափեցաւ սաղարթ,  
ել մի վնտոիլ դու մանուշակ ու վարդ.  
Բնութիւնը տիսուր, պարտէզը տրտում,  
Զմեռուայ հոգսն է մարդոցը սրտում։ Գ. Ք.

Այս բոլոր նախադասութիւնները նկարագրում  
են աշնանային մի պատկեր։ Իւրաքանչիւրը նրան-  
ցից առանձնապէս պարունակում է իր մէջ մի ամ-  
բողջական միտք. բայց բոլորը միասին կազմում են  
մի բարդ նախադասութիւն, որ բաղկացած է մի  
քանի ինքնուրոյն նախադասութիւններից։ Զը նա-  
յելով, որ առաջին, երկրորդ և երրորդ նախադասու-  
թիւնների մէջ դրւած են ստորակէտներ (,), իսկ  
երրորդից յետոյ՝ միջակէտ (.), բայց և այնպէս այդ  
բոլոր նախադասութիւնները ունեն ներքին կապ։

Ներքնուրոյն նախադասութիւնների կապակցու-  
թիւնը լինում է շորս տեսակ՝ 1. բաղնիւսական

### ԲԱՂ.ՀԻՄԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 34. Բաղհիւսական կոչում է այն նախադա-  
սութիւնների կապակցութիւնը, որոնք պարունակում  
են իրանց մէջ միմեանց հետ համաձայն մտքեր։—  
Երուսաղէմ քաղաքի տեղը մի մշակւած դաշտ  
էր, եւ տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր։

Քանի կը յիշեմ, սիրտս խոցոտի,  
Ու ճմլած հողիս վըիժու բոցոտի,

Ու զնաց որդին, շատ քըտինք թափեց,  
Մեծ հարստութիւն, մեծ զանձ ժողովեց  
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով... Գ. Ք.

Ես մինչեւ մահ ու կախաղան  
Ել շեմ թողնիլ իմ զէնքը...  
Ել այսուհետ շեմ լսելու  
Զանդակների դողանջիւն։ Յ. Թ.

Առաջ երկինքը թխպում է, յետոյ անձըն է գալիս։

Խաղաղ զիշեր էր. ոչ ձայն էր լսում, ոչ տերեւ  
Էր շարժում. Ոչ միայն մարդիկ էին ընած, այլ եւ  
քնած էր ամրող բնութիւնը. Կիւրակի օր ես տա-  
նից դուրս չեկայ. առաջինը՝ մեզ մօտ հիւրեր կա-  
յին, երկրորդը՝ դուրսը շատ շող էր։

Բաղհիւսակոն կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցում են իրար հետ եւ կամ ու, առաջ—յետոյ, ոչ—ոչ, ոչ միայն—այլ եւ, ել—ել, առաջինը, երկրորդը և այլ բառերով:

Վարժութիւն:—Գտէք ձեր սովորած յօդւածներից ու ստանաւորներից կամ կազմեցէք ձեզանից բաղհիւսական կապակցութեան մի քանի օրինակներ:

### ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 35. Ներհակական կոչում է այն նախադասութիւնների կապակցութիւնը, որոնք պարունակում են իրանց մէջ միմեանց հակառակ մտքեր:

Սարերի ձիւնը զեռ չի վերջացել,  
Բայց դաշտ ու հովիտ փթթել են, բացւել:

Իր շուրջը նայեց, աշք ածեց երկար,  
Բայց ոչ պահապան, ոչ էլ հովիւ կար.  
Միայն մի ամպ էր լողում վերեւում...

Արևն էլ շողքը կապոյտ երկնքից  
Դցել է ներքե ճիւղի արանքից,  
Զուրը փայփայում, հետը խաղ անում...  
Սակայն նա դարձեալ աղմուկ է հանում: Յր. Թ.

Ամսուը տաք է լինում, իսկ ձմեռը՝ ցուրտ:

Ներհակական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցում են իրար հետ բայց, սակայն, իսկ, միայն և այլ շաղկապներով:

Բայց կան գէպքեր, երբ ներհակական կապակցութեան մէջ բաց է թողնուում շաղկապը:—  
Սիրունը գնաց առաջից տրտում,

Տղեղը՝ յետքից ոխ պահած սրտում: Գ. Ք.  
Այստեղ բաց է թողնուած իսկ շաղկապը:—  
Սիրունը գնաց առաջից տրտում, իսկ տղեղը՝  
յետքից ոխ պահած սրտում:

Վարժութիւն:—Գտէք ձեր սովորած յօդւածներից ու ստանաւորներից կամ կազմեցէք ձեզանից ներհակական կապակցութեան մի քանի օրինակներ:

### ՏՐՈՀԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

§ 36. Տրոհական կոչում է այն մտքերի կապակցութիւնը, որոնցից մէկի ընդունելովը հերքում է միւսը:—

Աշնանը կամ անձրև է գալիս, կամ եղանակը պարզ է լինում:

Կէս գիշերին գեղ լուսինը  
Լող էր տալիս երկնքում,  
Տխուը նայում գէպի աշխարհ  
Ու ինքն իրան մորմոքում.  
Մերը պահուում էր ամպերի տակ  
Նա սարսափով ու գողով,  
Մերը ամպերից գուրս էր լողում,  
Կըկին փայլում իր շողով: Յր. Թ.

Ինչպէս տեսնում ենք, տրոհական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցում են իրար հետ կամ—կամ, մեր—մեր շաղկապներով:

Վարժութիւն:—Գտէք ձեր սովորած յօդւածներից ու ստանաւորներից կամ կազմեցէք ձեզանից տրոհական կապակցութեան մի քանի օրինակներ:

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԿՍՊԱԿՅՈՒԹԻՒՆ

§ 37. Պատճառական կոչւում է այն նախադասութիւնների կապակցութիւնը, որոնք պարունակում են իրանց մէջ մի երեսյթի պատճառը և նրա հետևանքը:—

Ուսումը և գիտութիւնը անհրաժեշտ են մարդու համար, այդ պատճառով էլ ծնողներն իրանց որդոց պէտք է տան դպրոց: Հայերը հասկացան իրանց մօտալուտ վտանգը, որովհետեւ թաթարները արդէն մօտեցել էին Հայոց երկրի սահմաններին:

Պատճառական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցուում են իրար հետ որովհետեւ, այդ պատճառով, ուստի, ուրեմն և այլ շաղկապներով:

Սակայն յաճախ այդ շաղկապները բաց են թողնելում:—

Սնբախտ հայրդ զիր չը գիտէր,  
Հողագործ էր, կարօտ ուսման.

(Այդ պատճառով) Գիւղի անգութ վաշխառուներ  
Քաղցած, ծարաւ թողին նորան:  
Հազար ու մի թուղթ զրելով՝  
Քո հօր տեղակ ստորագրեցին...Ա. Ծ.

Վարժութիւն:—Գտէք ձեր սովորած յօդւածներից ու ոտանաւորներից կամ կազմեցէք ձեզանից պատճառական կապակցութեան մի քանի օրինակներ:

§ 38. Պատճառական կապակցութեանն է պատկանում նաև պայմանական (условное) կապակցու-

թիւնը, որի մէջ դարձեալ յայտնւում է մի երեսյթի պատճառը և նրա հետևանքը: Բայց պայմանական կապակցութիւնը տարբերւում է պատճառականից նրանով, որ պատճառական կապակցութեան մէջ երեսյթի պատճառը կայ կամ պիտի լինի. իսկ պայմանականի մէջ այդ պատճառը կարող է լինել և չը լինել, ուստի նրա հետևանքն էլ կարող է իրագործվել և չ'իրագործւել:—

Եթէ քամին դադարում է և ծովը հանդարտ է լինում, նաւերն ազատ առաջ նն լողում:

Պայմանական կապակցութեան մէջ նախադասութիւնները կապակցում են իրար հետ եթէ շաղկապով:—

Վարժութիւն:—Գտէք ձեր սովորած յօդւածներից ու ոտանաւորներից կամ կազմեցէք ձեզանից պայմանական կապակցութեան մի քանի օրինակներ:

§ 39. Պարբերութիւն (պերօծ) կոչւում է այն բարդ նախադասութիւնը, որ սովորականից լինում է աւելի ընդարձակ, պարունակում է իր մէջ աւելի լիակատար միտք և ունի գեղարւեստական ձև:—

Երբ առաւտեան արևը պայծառ  
Ուկեզօծում էր դաշտերը դալար,  
Զանասէր մեղին ծաղկոց հրաւիրում,  
Շինականներին հանդը դուրս բերում, — ||  
Մակարը քաղցած պառկած էր թախտին,  
Պարապ ուսարապ սպասում բախտին: Յ. Թ.

Այս պարբերութիւնը կարդալիս՝ մեր ձայնը նրա առաջին մասում բարձրանում է ու աճում, իսկ երկրորդ մասում՝ ցածրանում է ու նւազում: Այդ պատճառով էլ առաջին մասը կոչւում է աճում, իսկ երկրորդ մասը՝ նվազում: Առհասարակ աճումը բաժանում է նւազումից, ստորակէտով կամ ստորակէտով ու անջատման գծով (,—):

Կարծ պարբերութիւնը կոչւում է պարզ, իսկ աւելի ընդարձակը՝ բարդ:

Պարբերութիւնն ունի երկու վերլուծութիւն՝  
1) ՏՐԱՄԱՔԱՆԱԿԱՆ, երբ ուշադրութիւն ենք զարձնում նրա բովանդակութեան ու մտքի վրայ և 2) համաձայնական, երբ ուշադրութիւն ենք դարձնում նրա կազմութեան վրա:

Երբ պարբերութիւնը վերլուծում ենք տրամաբանական կողմից, պէտք է ցոյց տանք նրա թէ գլխաւոր միտքը, այսինքն պարբերութեան բնաբանը (քէման), և թէ երկրորդական մտքերը:

Վերեի պարբերութեան մէջ գլխաւոր միտքն է՝

Մակարը քաղցած սպասում էր բախտին, որ արտայայտւած է նւազումի մէջ, իսկ բոլոր միւս մըտքերը երկրորդական են:

Երբ պարբերութիւնը վերլուծում ենք համաձայնական կողմից, պէտք է ցոյց տանք թէ քերականական ինչ եղանակով են կապւած միմեանց հետ նրա աճումը և նւազումը՝ ստորագրական, թէ շարպը պական:

Պարբերութիւնները լինում են ութր տեսակ՝  
1. պատճառական (причинный), 2. պայմանական (условный), 3. համեմատական (сравнительный), 4. բացատրական (изъяснительный), 5. հետեւողական (последовательный), 6. ներհակական (противительный), 7. բաղիւսական (соединительный) և 8. սեղատական (уступительный):

§ 40. Պատճառական կոչւում է այն պարբերութիւնը, որի մի մասը պարունակում է իր մէջ մի բանի պատճառը կամ հիմքը, իսկ միւսը՝ այդ պատճառի կամ հիմքի հետեանքը: Այդ պարբերութեան մասերը միանում են իրար հետ որովհետեւ, ուսի և այլ քերականական կապերով:—

Դատ հեղինակներ, չը նայած նրանց ուսումնականութեան ու գիտութեան, վրդովում են հոգիս և այն ժամանակ, երբ ասում են ճշմարտութիւն, ||  
որովհետեւ այդ ճշմարտութիւնը մեռած է նրանց բերանում, որովհետեւ այդ ճշմարտութիւնը բղխում է նրանց ոչ բարի սրտից, որովհետեւ սիրոյ շունչը չփափացնում այդ ճշմարտութիւնը:

Վարժութիւն: — Կազմեցէ՛ք պատճառական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Ամենալաւ հարստութիւնը գիտութիւնն է: 2. Մի ծաղկով գարուն չի լինի:

§ 41. Պայմանական կոչւում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ մի բանի թէական կամ ենթադրական պատճառը և նրա թէական կամ ենթադրական հետեւանքը։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ երէ, թէ, թէ որ—այն ժամանակ և այլ կապերով։

Երկար աշխատանքից յիտոյ, երէ ուզում էք հանգստացնել ձեր զղերը, հեռու լինել քաղաքային ազմկալի կեանքից ու նեխւած օդից. երէ ուզում էք, որ ձեզ շը խանգարեն կառքերի ձայները, ու գիշերը հանգիստ քնէք ձեր տանը. երէ ուզում էք պարզ ու նահապետական կեանք վարել, || զնացէք զիւղը, որտեղ կը հանգստանաք բնութեան ծոցում, կը շնչէք մաքուր ու առողջարար օդ, կը զբօնէք կանաչ ծառերի հովանու տակ, կը լսէք թռչունների անուշ դայլայլը ու բիւրեղափայլ առուների քաղցր կարկաջիւնը։

Վարժութիւն. —Կազմեցէք մի քանի պայմանական պարբերութիւններ այս բնարաններով՝ 1. Անգործութիւնը մեզ վնաս է բերում; 2. Սնհունար մարդու լեզուն երկար կը լինի։

§ 42. Համեմատական կոչւում է այն պարբերութիւնը, որի մէջ համեմատում են իրար նման առարկաներ։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ այնպէս, պէս, նման, ինչքան—այնքան և այլ կապերով։

Ինչպէս աշնան երկնքիցը  
Կըտրւում է անձրեւ,  
Եւ ամպերի միջից յանկարծ  
Շողշողում է արեր, — ||

Այնպէս էլ գեղ, չքնաղ կոյսի  
Արտասունքը դադարեց.  
Յուսոյ փայլը շողաց յանկարծ,  
Նախշուն դէմքը զարդարեց։ Յ. Թ.

Վարժութիւն. —Կազմեցէք համեմատական պարբերութիւններ այս բնարաններով՝ 1. Ծով և արտ; 2. Տուն ու բուն։

§ 43. Բացարական կոչւում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ մի բանի աստիճանը կամ ոյժը։ Այս պարբերութեան մտսերը միանում են իրար հետ՝ այնպէս—որ, այնքան—որ, այնքան—մինչեւ որ և այլ կապերով։

«Վէրը Հայաստանին» այնիքն ողերել էր Խ. Արովեանին, || որ հեղինակն այդ գիրքը գրելիս՝ մոռացել էր ամեն բան, ոչ մի բոպէ չէր հանգըտանում, անդադար գրում էր ու գրում. ոչ ճաշի ժամանակ էր ճաշում, ոչ քնի ժամանակ էր քնում, շը նայելով, որ տանեցիք շուտ-շուտ յիշեցնում էին նրան այդ մասին։

Վարժութիւն. —Կազմեցէք բացարական պարբերութիւններ այս բնարաններով՝ 1. Մարդ ինչքան բարի պիտի լինի; 2. Մինչև Շուշանը զարդարւի, ժամը գուրս կը գայ։

§ 44. Հետեւողական կոչւում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ իրար յաջորդող գործողութիւններ կամ դէպքեր։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ եր—այն ժամանակ, ենց որ—իսկոյն և այլ կապերով։

Երբ մզկիթից Մուհամէդի

Ազանը զիլ հնչում էր, ||

Ամեն անգամ Աղամ-Ալին

Սըտի խորքից հրճում էր.

Նա հինայած, կարմրաթաթախս

Իր մօրուսը շփելով՝

Սկըսում էր իր նամազը,

Սառը գետնին չոքելով։ Յր. Թ.

Վարժութիւն։—Կազմեցէք հետեղական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Գարնան գալը։ 2. Ինչ են անում մարդիկ աշնանը։

§ 45. Ներհակական կոչում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ իրար հակադիր մտքեր։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ բայց, սակայն, ընդհակառակը և այլ կապերով։—

Ազուլիսի տների մէջ

Լոյսը վաղուց մարել է,

Եւ յոգնատանջ ժողովրդի

Քունը վաղուց տարել է, ||

Բայց Մուսայի, Աղամ-Ալու

Քունը բնաւ շէր տանում.

Ամբողջ գիշեր արթուն նստած՝

Խորհում էին այւանում։ Յր. Թ.

Վարժութիւն։—Կազմեցէք ներհակական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Թոշունների մէջ սոխակը բուրից գեղեցիկ է երգում։ 2. Հայրենիքը սուրբ է բոլորի համար։

§ 46. Բաղնիւսական կոչում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ մի շաբաթի հետ

միացած երկոյթներ։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ ոչ միայն—այլ եւ, ոմանք —ոմանք և այլ կապերով։—

Պետրոս Մեծը ոչ միայն յաղթեց Շեղացիներին ու ընդարձակեց Առևսաստանի սահմանները, || այլ եւ զօրեղացրեց նաւատորմիզը, տարածեց ուսումը և գիտութիւնը, փոխեց ժողովրդի նիստ ու կացը և շատ բարենորոգութիւններ մտցրեց իր երկրում։

Վարժութիւն։—Կազմեցէք բաղնիւսական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Մարդ ինչքան պիտի բարի լինի։ 2. Աշխատանքը յաղթում է բոլոր գժւարութիւններին։

§ 47. Տեղատական կոչում է այն պարբերութիւնը, որ պարունակում է իր մէջ միբանի հակառակ հետեանքը։ Այս պարբերութեան մասերը միանում են իրար հետ՝ թէպէս (թէեւ)—բայց, նիւս է—բայց, բող, չը նայելով—այնուամենայնիւ և այլկապերով։—

Թէպէս տաւնկս փոքրիկ է, ցած,

Արօտներում միշտ թաք կացած, ||

Բայց իմ փունջս ամենի տան,

Թէ աղքատի, թէ մեծատան,

Իբրև գարնան առաջին զարդ,

Կարէ տեսնել ամեն մի մարդ։

Թող փշէ քամին պաղ-պաղ երեսիս,

Վերէն ամպերէն սաստիկ ձիւն բող գայ,

Որքան որ կ'ուզէ՝ բող փշէ հիւսիս, ||

Ցուսով եմ, վաղ-ուշ գարուն պիտի գայ։ Գ. Ք.

Վարժութիւն։—Կազմեցէք տեղատական պարբերութիւններ այս բնաբաններով՝ 1. Աղքատութիւնը արատ չէ 2. Ամեն բան իրան տեղը։

## Յ Ա Ն Կ

Երես

Առաջաբան . . . . .	3
§ 1. Համաձայնութիւնը և նրա բաժանումը . . . . .	4

### I

#### ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

§ 2. Նախադասութեան անդամների արտայատութիւնը բանի մասերով . . . . .	5
§ 7. Ստորոգեալի համաձայնութիւնը ենթակայի հետ	8
§ 9. Բայի ժամանակների գործածութիւնը . . . . .	12
§ 10. Որոշիչի համաձայնութիւնը որոշեալի հետ . . . . .	17
§ 13. Հոլովների գործածութիւնը . . . . .	22

### II

#### ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

§ 22. Ստորադրական կապակցութիւն . . . . .	34
§ 23. Ենթակայ և ստորոգեալ նախադասութիւններ . . . . .	35
§ 24. Որոշիչ նախադասութիւնների կապակցունը և կրծատումը . . . . .	37
§ 27. Լրացուցիչ նախադասութիւնների կապակցութիւնը և կրծատումը . . . . .	41
§ 29. Պարագայական նախադասութիւնների կապակցութիւնը և կրծատումը . . . . .	44
§ 31. Ենթակայ և ստորոգեալ նախադասութիւնների կապակցութիւնը և կրծատումը . . . . .	49
§ 33. Նախադրական կապակցութիւն . . . . .	52
§ 39. Պարբերութիւն . . . . .	58






# Lazur t'v Shvel

## Ցարութիւն Թումանեանի

1911

1)	ԽօԼԵՐ, վոդքալի . . . . .	20	կազ.
2)	Ա.ԲԻՌԻԹԵԱՆ ԹԵԽԵԲԻ (Ժարգ.թ.) . . . . .	30	"
3)	ԱՄՈՒԹԻՒՆ (առկաւաթիւ) . . . . .	20	"
4)	ՀԱՆԱՔ ՈՒ ԳԱՆԱԿ (առկաւաթիւ) . . . . .	30	"
5)	ԲԱՆԱՍՏԵՎԱՇՈՒԹԻՒՆՆԵՐ (առկաւաթիւ) . . . . .	50	"
6)	ՄԵԼԻՔ. ԲԵԳԱՅԻՐ, պատմ. պօէմ (առկաւաթիւ),	10	"
7)	ՄԵԼԻՔ. ԲԵԳԱՅԻՐ,	20	"
8)	ՄՈՒՍԱ, պատմ. պօէմ I նուազ . . . . .	20	"
9)	ՄՈՒՍԱ, " " II . . . . .	20	"
10)	ՆՈՒԱ.ԳԵՆԵՐ	30	"
11)	ՀԱԶԱՐԱՆ. ԲԼՅՈՒԽ, ֆէկրիս 3 արարւածով	30	"
12)	ԱՐՏՈՒՐՈ.ԶԻ Բ.պատմ. ֆէկրիս 4 պատկերով	30	"
13)	Ո-ՈՒ-ՀԱՅԵՐԻՆ ԸԱ.Ո.Ո.ՐԱ.Ն 2-րդ ապագրութ.	125	"
14)	ՀԱՅ-Ո-ՈՒ-ՄԵՐԻՆ ԸԱ.Ո.Ո.ՐԱ.Ն	1	ռ.
15)	ԱՏՈՒԳ.Ա.ԲԱՆՈՒԹԻՒՆ 5-րդ ապագրութիւն	40	"
16)	ՀԱՄԱ.ԶԱՅՆՈՒԹԻՒՆ 2-րդ ապագրութիւն	45	"



Գիմնա Փետրիակ գրավաճառներին կամ հեղինակին  
Тифлисъ, Ваке, собств. домъ, А. И. Туманову.

ՀՀ Ազգային գրադարան



NL0240010

6322